

Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր ՈՒ Մ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱՆԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1.	Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը
	<p>Երևան քաղաքի վարչական տարածքում առկա են մեկ տասնյակից ավել վայրեր, որտեղ մատուցվում են հոգեհանգստի հետ կապված ծառայություններ: Դրանց մի մասը գտնվում է քաղաքի բանուկ հատվածներում, բազմաբնակարան շենքերի և դպրոցների հարևանությամբ, ինչը առաջացրել է բնակիչների արդարացված դժգոհությունը:</p> <p>Տվյալ խնդիրը կարգավորելու խնդրանքով Երևանի քաղաքապետարան են ներկայացվել բազմաթիվ դիմում-բողոքներ՝ համապատասխան միջոցներ ձեռնարկելու և այդ հաստատությունները բազմաբնակարան շենքերին, իրենց բնակելի տներին և դպրոցներին հարակից տարածքներից այլ վայրեր տեղափոխելու խնդրանքով:</p> <p>ՀՀ օրենսդրությամբ հոգեհանգստի ծառայության իրականացման և (կամ) մատուցման կարգը և դրանց իրականացման տեղակայման վայրերը սահմանված չեն, ինչի հետևանքով հնարավոր չէ կատարել համապատասխան հսկողություն տվյալ գործունեության տեսակի նկատմամբ:</p>
2.	Առաջարկվող կարգավորման բնույթը
	<p>Օրենքների նախագծերի կարգավորման նպատակն է կանոնակարգել հոգեհանգստի ծառայության իրականացման հետ կապված հարաբերությունները, սահմանել նշված ծառայության իրականացման համար համապատասխան թույլտվության տրամադրումը, մատուցվող ծառայությանը ներկայացվող պահանջները, իրականացման վայրերը և տեղական տուրք, ինչպես նաև վարչական պատասխանատվություն՝ առանց թույլտվության գործունեություն իրականացնելու դեպքերը կանխելու համար:</p> <p>Միաժամանակ դրանց տեղակայման վայրերը և նշված ծառայություններին ներկայացվող պահանջները սահմանելու լիազորությունը առաջարկվում է վերապահել համայնքի ավագանուն՝ ելնելով տեղական պայմաններից՝ համայնքի առանձնահատկություններից և սովորույթներից:</p>
3.	Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք
	Նախագիծը կազմվել է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի կողմից:
4.	Ակնկալվող արդյունքը
	Ակնկալվում է կանոնակարգել հոգեհանգստի ծառայության իրականացման հետ կապված հարաբերությունները, որի արդյունքում կվերանա նաև քաղաքացիների դժգոհությունը:

